

# ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

## Մոնա Հակոբյան

*Եվրասիա միջազգային համալսարանի Օտար լեզուների և գրականության  
ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու*


## ԱՆԳԼԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Հոդվածում ներկայացվում են անգլերենի դասավանդման ժամանակակից այնպիսի մոտեցումներ, ինչպիսիք են հաղորդակցական մոտեցումը, առաջադրանքների վրա հիմնված ուսուցումը, ինչպես նաև այլ առարկաների բովանդակության և օտար լեզվի միասնական ուսումնառության մոտեցումը: Հիմնական խնդիրն է ներկայացնել դասավանդելու և սովորելու գործընթացի սահմանմանում ու վերլուծությունը, ինչպես նաև տվյալ գործընթացն ապահավող այնպիսի գործոններ, ինչպիսիք են սովորողների կարիքները, խթանվածությունը ուսումնառության ոճը և դասավանդողների իրազեկությունները (կոմպետենցիաները):

**Հիմնաբառեր:** կարիքներ, խթանվածություն, իրազեկություն, հաղորդակցական մոտեցում, առաջադրանքի հիման վրա ուսուցում, այլ առարկաների բովանդակության և օտար լեզվի միասնական ուսումնառություն

Սույն հոդվածը նպատակադրված է ներկայացնելու անգլերենի դասավանդման ժամանակակից մոտեցումները՝ մասնավորապես անդրադառնալով այսօր արդեն մեծ արդիականություն վայելող *հաղորդակցական մոտեցմանը*, *առաջադրանքների հիման վրա դասավանդման մոտեցմանը*, ինչպես նաև *այլ առարկաների բովանդակության և օտար լեզվի միասնական ուսումնառությանը*: Մասնագիտական գրականության մեջ շատ հաճախ հանդիպում ենք վերջիններիս անգլերեն անվանումներն ու հապավումները, որոնք համապատասխանաբար ներկայանում են հետևյալ կերպ՝ Communicative Language Teaching (CLT), Task-Based Language Teaching (TBLT), Content and Lan-

guage Integrated Learning (CLIL): Հոդվածի հիմնական խնդիրն է ներկայացնել դասավանդելու և սովորելու գործընթացի սահմանմանումն ու վերլուծությունը, ինչպես նաև տվյալ գործընթացն ապահավող այնպիսի գործոններ, ինչպիսիք են սովորողների կարիքները, խթանումը, ուսումնառության ոճը և դասավանդողների իրազեկությունները: Ուսումնառության գործընթացը մեծապես կախված է դասավանդողներից և սովորողներից, որոնք ունեն իրենց համապատասխան դերերը, կարիքներն ու պատասխանատվությունները: Այստեղ թերևս հիշատակելի է Աբրահամ Մասլոյի «Մարդու խթանման տեսությունը» մարդկային կարիքների վերաբերյալ: Նա ներկայացնում է հինգ մակարդակներից կազմված աստիճանակարգություն<sup>1</sup>:



Ամենացածր մակարդակում ներկայացվում են մարդու բնական պահանջ-մունքները, իսկ դրանից բարձր մակարդակներում առավել բարձր արժեքներ են ներկայացվում՝ անվտանգություն, սեր, պաշտպանություն, հարգանք և այլն: Կարիքների ամենավերին մակարդակն ինքնիրացումն է, որը ներառում է փաստեր, նախապաշարմունքների բացակայություն, խնդիրների լուծում, բարոյականություն և ստեղծագործականություն:

Ուսումնառության գործընթացում անհրաժեշտ է նկատի առնել, որ սովորողների վերին պահանջները կարող են բավարարվել, եթե ցածր մակարդակում գտնվող պահանջները մեծապես բավարարված են: Բավարարվածության մակարդակը սահմանում է սովորողների՝ օտար լեզու սովորելու խթանվածության աստիճանը: Խթանումը, որպես ուսումնառության գործընթացի հենքային գործոն, սահմանվում է որպես ներքին մի մղում, որն ուղղորդված է

<sup>1</sup> Maslow A. H. 1943. A Theory of Human Motivation. Psychological Review 50 1943, p.370-96.

կատարելագործմանը<sup>1</sup>: Զ. Հարմերը շեշտադրում է ուսուցչի դերը՝ դիտարկելով այն որպես ուսանողների շարունակական խթանման հիմնական գործոն<sup>2</sup>: Այստեղ հատկորոշվում են սովորելու ոճերը, որոնք մեծապես կախված են սովորողի անհատականությունից, ձանաչողական և հոգեբանական բնույթից: Այսինքն՝ սովորելու ոճերը պայմանավորվում են բանականությամբ և ինտելեկտով: Այս հայեցակետից ոլորտի հետազոտող Հ. Գարդները տարբերակում է ինտելեկտի ութ տեսակ՝ լեզվաբանական, տրամաբանական, տարածական, երաժշտական, գեղագիտական, միջանձնային, ներանձնային և նատուրալիստական<sup>3</sup>:

Եվ ի վերջո, ուսումնառության գործընթացի նպատակներին հասնելու և ուսանողների պահանջումները բավարարելու համար օտար լեզվի դասավանդողները պետք է ցուցաբերեն այնպիսի իրազեկություններ, որոնք հենքային և թիրախային են յուրաքանչյուր լավ մանկավարժի համար: Ըստ Մ. Կելիի յուրաքանչյուր մանկավարժ-լեզվաբան պետք է ցուցաբերի չորս հիմնական իրազեկություններ՝ ընդհանուր, գոյությունական, սովորելու կարողություն և ռազմավարական իրազեկություն<sup>4</sup>: Ընդհանուր իրազեկությունները հիմնականում միջմշակութային և անձնահոգեբանական հիմք ունեն և ներառում են արժեքներ, հավատալիքներ ու կարծիքներ: Միջմշակութային հայեցակետից կարևորվում են միջանձնային հարաբերությունները, ժեստերի լեզուն, մշակութային տարբերություններն ու արտեֆակտերը: Ինչ վերաբերում է սովորելու և ինքնակրթվելու կարողությանը, այստեղ հարկ է հաշվի առնել մասնագիտական զարգացման ինքնագնահատականը՝ ինտեգրացնելով նոր ձեռք բերած գիտելիքները նախկին ուսումնական համատեքստերին: Այս ամենը կարող է ամբողջացվել ռազմավարական իրազեկությամբ, որը ներառում է հմտությունների և կարողությունների պլանավորում, գնահատում և ձիշտ հաղորդակցության վարում:

Ուսումնական գործընթացում յուրաքանչյուր դասավանդող պետք է հընթացս ցուցաբերի հետևյալ իրազեկությունները՝ իրականացնելով որոշակի դերեր և հանդես գալ որպես վերահսկող, կազմակերպող, գնահատող, խթանող, մասնակցող, ռեսուրս, դասավանդող և դիտորդ<sup>5</sup>: Վերոբերյալ բոլոր գործոնները կարող են իրացվել օտար լեզվի դասավանդման համապատասխան մոտեցման պարագայում:

Վերոնշյալի համատեքստում քննության ենք առնում անգլերենի դասավանդման ժամանակակից մոտեցումները՝ կիզակետում ունենալով սովորողների կարիքները, խթանումը, սովորելու ոճը և դասավանդողի իրազեկությունները: Դրանցից առաջինը դասավանդման հաղորդակցական մոտեցումը առավել կարևորում է լեզվի գործառնությունները, քան կանոններն ու

1 Harmer J. 2001. The Practice of English Language Teaching. London: Longman.

2 Ibid p. 52.

3 Gardner H. 1999. Intelligence Reframed. New York: Basic Books.

4 Kelly M., Grenfell M., Allan R., Kriza C., McEvoy W. 2004. European Profile for Language Teacher Education – A Frame of Reference. A Report to the European Commission Directorate General for Education and Culture.

5 Harmer J. 2001. The Practice of English Language Teaching. London: Longman., p. 52.

բառապաշարը: Հաղորդակցական մոտեցման հիմնական սկզբունքն է սովորեցնել ուսանողներին կիրառել լեզվական ձևերը տարբեր համատեքստերում և տարբեր նպատակներով<sup>1</sup>: Հաղորդակցական մոտեցման հիմնական սկզբունքներն են հաղորդակցական փոխազդեցությունը, ակտիվ ներգրավվածությունը, համապատասխան նյութերի ընտրությունը, անգլերենի դասավանդումը անգլերենով, սխալների գիտակցումը և ընդունումը: Այս մոտեցմամբ դասավանդումը կարևորում է իրական հաղորդակցությունը, հաղորդակցական գործընթացում ներգրավվածությունը, որտեղ, սակայն, լեզվական կանոնների ճշգրտությունը այնքան էլ կարևոր չէ: Հաղորդակցական մոտեցմամբ դասավանդումը ենթադրում է դերային խաղեր և մոդելավորում. դասապրոցեսի ընթացքում սովորողները պետք է ցանկանան հաղորդակցվել: Զ. Հարմերի դիտարկմամբ ուսանողները պետք է ունենան հաղորդակցության նպատակ, պետք է կենտրոնանան իրենց արտաբերած նյութի բովանդակության վրա, այսինքն՝ հարկ է ցուցաբերել իրազեկություն ոչ թե լեզվական կառուցվածքի, այլ հենց լեզվի բազմազանության մասին:

Հաջորդ ժամանակակից մոտեցումը, որը խրախուսվում է կիրառել, *առաջադրանքի վրա հիմնված ուսուցում* (Task-Based Learning) է, որն առաջարկել է հնդկական դպրոցներից մեկում իր հետազոտությունն իրականացնող Ն. Պրաբհուն: Նրա հիմնական ավանդն այն է, որ լեզվի կառուցվածքի փոխարեն սովորողներին հարկ է հանձնարարել որևէ առաջադրանք կամ խնդիր, որը նրանք կլուծեն<sup>2</sup>: Այս առումով, փաստորեն, շեշտը պետք է դրվի լեզվի կիրառման վրա՝ որպես իրական աշխարհի պահանջների բավարարման միջոց: Խթանումը դառնում է այն հիմնական ուժը, որն ուղղորդում է ուսումնական գործընթացը: Լեզուն այստեղ կիրառվում է հաղորդակցական սահունության, և ոչ թե կանոնային ճշգրտության համար: Ի տարբերություն հաղորդակցական մոտեցման, որը ավելի շատ փիլիսոփայություն և ուղղվածություն է, առաջադրանքների վրա հիմնված ուսուցումը սկզբունքների և գործընթացների մի համակարգ է, որը գործի է դնում այդ փիլիսոփայությունն ու ուղղվածությունը: *Առաջադրանքների հիման վրա դասավանդման* համատեքստում դասապրոցեսում ներկայացվում է մի հանձնարարություն է, որը ուսանողները պետք է մշակեն գործաբանորեն ցանկալի վերջնարդյունքին հասնելու համար<sup>3</sup>:

Օտար լեզվի դասավանդման գործընթացում օգտագործվում են և՛ մանկավարժական, և՛ լեզվաբանական առաջադրանքներ: Մանկավարժական առաջադրանքների հիմնական թիրախը իմաստն է, մինչդեռ լեզվաբանականը կենտրոնանում է ձևի խաթարման վրա: Առաջադրանքները սովորաբար ունենում են ոչ լեզվական վերջնարդյունքներ, բայց վարժությունները միտված են ձևավորելու լեզվական վերջնարդյունքներ: Այս հայեցակետից ոլորտի հետազոտող Զ. Ուլիսիը առաջարկում է երեք հիմնական փուլեր՝ նախաառաջադրանք, առաջադրանքի շրջանակը և լեզվի կիրառումը:

1 Harmer J. 2001. The Practice of English Language Teaching. London: Longman., p. 84.

2 Prabhu, N.S. 1987. Second Language Pedagogy. Oxford: Oxford University Press.

3 Ellis R. 2003. Task-Based Language Learning and Teaching. Oxford: Oxford University Press.

Նախաառաջադրանքում դասավանդողը լսարանի հետաքրքրությունների շրջանակներում ընտրում է մի թեմա՝ առանձնացնելով թեմային վերաբերող կիրառելի բառերն ու արտահայտությունները: Բուն առաջադրանքի շրջանակում սովորողներն իրականացնում են առաջադրանքը խմբերով կամ զույգերով, իսկ ուսուցիչը ղեկավարում է այդ գործընթացը: Լեզվի կիրառման փուլում սովորողները գործառում են որոշակի լեզվական տարրեր, որոնք պահանջում է առաջադրանքը<sup>1</sup>:

Լեզվի դասավանդման հաջորդ կարևոր մոտեցումը *այլ առարկաների բովանդակության և օտար լեզվի միասնական ուսումնառությունն* է, որտեղ ներկայացվում են բոլոր այն մեթոդները, որոնցով այլ առարկաները դասավանդվում են օտար լեզվով: Այս մոտեցմամբ ուսուցանումը ենթադրում է երկակի նպատակ՝ մի կողմից իրականացվում է բովանդակային ուսուցում, մյուս կողմից՝ օտար լեզվի համաժամանակյա ուսուցում: Լեզվի մասին գիտելիքը դառնում է այլ առարկայի բովանդակության ուսումնասիրության միջոց և խթանում է սովորել բնական համատեքստայնացված լեզուն: Այս մոտեցման ամենակարևոր առավելությունը երկլեզու մշակույթի կերտումն է և միջմշակույթային հաղորդակցության ընկալումը: Ուսումնական գործընթացում բարելավվում են թիրախ լեզվի վերաբերյալ իրազեկությունները՝ նպաստելով մայրենի և օտար լեզուների մասին գիտակցության բարձրացմանը<sup>2</sup>: Դասավանդման այս մոտեցման ներդրումը հիմնվում է չորս հիմնական սկզբունքների վրա՝ ձանաչողություն, հանրայնացում, հաղորդակցություն և մշակույթ: Այլ առարկաների բովանդակության և օտար լեզվի միասնական ուսումնառության համատեքստում լեզվի ուսուցման չորս հմտություններն էլ հավասարապես կիրառելի են (ունկնդրում, ընթերցանություն, գրավոր խոսք և բանավոր խոսք): Սույն մոտեցման արդյունավետ իրականացման և ներդրման համար Լ. Վիլկանսեյնը առանձնացնում է այնպիսի հիմնական առաջադրանքներ, ինչպիսիք են դասընթացի կազմակերպվածությունը, մեթոդաբանությունը, իրազեկությունների զարգացումը, դասավանդելու և սովորելու միջավայրը<sup>3</sup>:

Այսպիսով, ժամանակակից աշխարհի դասավանդման մարտահրավերներից ելնելով՝ արդյունավետ ուսումնական գործընթացի կազմակերպումը մեծապես՝ կախված է ուսանողների խթանվածությունից, ճիշտ դասավանդման մոտեցման ընտրությունից, հանձնարարություններից և նյութերից, որոնք սահմանվում են ուսանողների հոգեբանական բնութագրիչներով, ինչպիսիք են սովորելու ոճը և ինտելկտի տեսակը: Առաջադրված և քննված մոտեցումներից յուրաքանչյուրը կարող է կիրառելի լինել անգլերենի լսարանում թե՛ առանձին, և թե՛ համադրությամբ: Սովորողների կարիքները որոշիչ են դառնում հենց մոտեցման ընտրությամբ:

1 Willis J. (1996). A Framework for Task-Based Learning. Oxford: Longman.

2 Hallet, W. 1998. "The bilingual triangle: Überlegungen zu einer Didaktik des bilingualen Sachfachunterrichts". Praxis des Neusprachlichen Unterrichts 45, 115-125.

3 Vilkanienė L. 2007. CLIL: Lithuanian Context. Language in Different Contexts. Research papers. Volume 2. Vilnius: Vilniaus pedagoginio universiteto leidykla, p. 415-24.

Сона Акопян

*Заведующая кафедрой иностранных языков и литературы  
Международного университета Евразия,  
кандидат филологических наук*

## СОВРЕМЕННЫЕ ПОДХОДЫ В ПРЕПОДАВАНИИ АНГЛИЙСКОГО КАК ИНОСТРАННОГО ЯЗЫКА

В статье представлены современные подходы к преподаванию английского языка, такие как коммуникативный подход, командный метод, а также предметно-языковой интегрированный подход обучения. Главная проблема заключается в определении и анализе процесса преподавания и обучения, а также механизма обеспечения данных процессов, таких как потребности обучения, мотивация, стиль обучения и компетенция преподавателя.

**Ключевые слова:** потребности, стимулы, осведомленность (компетенция), коммуникационный подход, командный метод обучения, предметно-языковое интегрированное обучение.

Sona Hakobyan

*Head of the Department of Foreign Languages and Literature at  
Eurasia International University,  
Ph.D. in Philology*

## MODERN APPROACHES OF TEACHING ENGLISH AS A FOREIGN LANGUAGE

The article reviews modern approaches in English Language Teaching (ELT): Communicative Language Teaching (CLT), Task-Based Language Teaching (TBLT), and Content and Language Integrated Learning (CLIL). It presents the definition, analysis and evaluation of the teaching/ learning process and the factors determining its success: students' needs, motivation, learning style, and type of intelligence as well as teachers' competences.

**Key Words:** needs, motivation, learning style, intelligence, competence, Communicative Language Teaching, Task-Based Language Teaching, and Content and Language Integrated Learning.